

**5.4. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության 2006թ. փետրվար ամսվա մոնիտորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2006թ. փետրվար ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը:

**Օդային ավազանի որակի մոնիտորինգ:** Փետրվարին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 12 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 2470 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- *ք.Երևանում վերցվել է օդի 1246 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական սահմանային թուլյատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 2.0, ազոտի երկօքսիդինը՝ 2.8, ազոտի օքսիդինը՝ 1.3 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.7, տոլուոլինը՝ 2.7 անգամ: Հունվար ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.4, ազոտի օքսիդինը՝ 1.3 անգամ:*

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում 2006թ. փետրվար ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.16
Ծծմբի երկօքսիդ	0.40	0.10
Ազոտի երկօքսիդ	0.399	0.111
Ազոտի օքսիդ	0.38	0.08
Գետնամերձ օզոն	0.050	0.033
Բենզոլ	0.235	0.043
Տոլուոլ	1.646	0.092
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-
Քլորոպրեն	-	-

- *ք.Գյումրիում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.4 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:*
- *ք.Վանաձորում վերցվել է օդի 696 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.7, ծծմբի երկօքսիդինը՝ 1.4 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.7 անգամ:*

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում 2006թ. փետրվար ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.25
Ծծմբի երկօքսիդ	0.18	0.07
Ազոտի երկօքսիդ	0.071	0.033
Ազոտի օքսիդ	0.04	0.02

- *ք.Հրազդանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:*

- *ք.Ալավերդիում վերցվել է օդի 456 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական և միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 12.4 և 2.1 անգամ: Հունվար ամսվա համեմատ որոշվող նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:*

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում 2006թ. փետրվար ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.11
Ծծմբի երկօքսիդ	1.03	0.62
Ազոտի երկօքսիդ	0.092	0.044
Ազոտի օքսիդ	0.05	0.02

- *ք.Արարատում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:*

**Մակերևութային ջրերի որակի մոնիտորինգ:** Փետրվարին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է Փամբակ, Դեբեդ, Չորագետ, Մարցիգետ, Ախթալա, Սևջուր, Քասախ, Հրազդան, Մարմարիկ գետերից, Երևանյան և Սևանա լճերից: Վերցվել է 48 փորձանմուշ, որոշվել է 20-21-ական ցուցանիշ:

- **Դեբեդ գետի ավազան:** Փամբակ, Չորագետ, Մարցիգետ և Ախթալա գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են նիտրիտ, ամոնիում իոնների, ԹԿՊ<sub>5</sub>-ի, իսկ Ախթալա գետից վերցված փորձանմուշում՝ նաև սուլֆատ իոնի ՍԹԿ-ն: Նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-2.0, ամոնիում իոնինը՝ 1.2-2.6 անգամ (ք.Վանաձորից ներքև ընկած հատվածքում՝ 7.8 անգամ): ԹԿՊ<sub>5</sub>-ի ՍԹԿ-ն ք.Վանաձորից ներքև ընկած հատվածքում գերազանցվել է 2.4 անգամ: Ախթալա գետից վերցված փորձանմուշում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 3.7 անգամ:
- **Սևջուր գետի ավազան:** Սևջուր և Քասախ գետերից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-2.2, սուլֆատ իոնինը՝ 2.1-3.7 անգամ:
- **Հրազդան գետի ավազան:** Մարմարիկ, Գետառ գետերից և Երևանյան լճից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-3.0 (Գետառի գետաբերանից վերցված փորձանմուշում՝ 9.4 անգամ), ամոնիում իոնինը՝ 4.6-9.8, ԹԿՊ<sub>5</sub>-ինը՝ 1.5-2.3 անգամ:
- **Սևանա լիճ:** Սևանա լճից վերցված փորձանմուշներում հսկվող աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը 2006թ. փետրվար ամսին

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	Նիտրիտ իոն (ՍԹԿ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	Ամոնիում իոն (ՍԹԿ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	Սուլֆատ իոն (ՍԹԿ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	-	-	0.46	-
	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	0.030	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	7.33	0.043	3.05	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	0.040	0.67	-
	6	Այրում գետից 0.5 կմ վերև	-	0.048	0.84	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	0.043	0.67	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	0.46	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	1.00	370.0
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.031	-	234.5
Քասախ	47	Գետաբերան	-	0.038	-	237.9
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	0.053	-	200.2
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	0.031	-	-
	56	Գետաբերան	7.03	0.082	3.83	-
Գետառ	59	Գետաբերան	6.22	0.072	3.83	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	4.58	0.226	1.79	-